

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ



1. Փաստաթուղթ	««Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22.01.2025թ. ՀՕ-17-Ն
Հրապարակումը	13.02.2025թ.
Ուժի մեջ է	15.02.2026թ.
Հղում	https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203066

Համառոտ նկարագիր

«Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում կատարված լրացմամբ Օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասի աղյուսակը լրացվել է նոր 22-րդ կետով, որի արդյունքում ֆիթնես կենտրոնի կամ մարզասրահի գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար սահմանվել է պետական տուրք՝

1. Երևան քաղաքում՝ տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով,
2. Մարզկենտրոններում՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով,
3. Երևան քաղաքից և մարզկենտրոններից դուրս՝ տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով:

2. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22.01.2025թ. ՀՕ-19-Ն
Հրապարակումը	13.02.2025թ.
Ուժի մեջ է	03.03.2025թ.
Հղում	https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203083

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխության արդյունքում շահութահարկի գծով ծախս ճանաչելու համար 100.000 դրամը գերազանցող դեբիտորական պարտքերն անհուսալի ճանաչելու շեմը սահմանվել է 300.000 դրամ:

Միաժամանակ, սահմանվել է, որ 300 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի՝ դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության) օրինական ուժի մեջ մտնելու օրվանից կամ դատարանի կողմից արձակված վճարման կարգադրության՝ օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստանալու օրվանից կամ դեբիտորական պարտքի գումարի բռնագանձման պահանջով նոտարի կողմից արձակված կարգադրության կողմերի համար պարտադիր դառնալու օրվանից կամ դեբիտորական պարտքի բռնագանձման պահանջը քննած արբիտրաժային տրիբունալի կողմից վճիռ (բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի) կայացնելու օրվանից:

3. Փաստաթուղթ
Ամսաթիվը և համարը
Հրապարակումը
Ուժի մեջ է
Հղում

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
 22.01.2025թ. ՀՕ-20-Ն
 13.02.2025թ.
 14.03.2025թ.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203084>

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված լրացումների արդյունքում անշարժ գույքի հարկով հարկման բազան ավելացել է նոր ենթակետ, համաձայն որի կադաստրային գնահատման հարկային տարվանից հետո կադաստր վարող մարմնում առկա հաշվառման (այդ թվում՝ ընթացիկ հաշվառում իրականացնող իրավասու մարմնից ստացված) տվյալների համեմատությամբ մինչև անշարժ գույքի հաջորդ կադաստրային գնահատման հարկային տարին ներառյալ ընկած ժամանակաշրջանում անշարժ գույքի հարկման բազան կարող է ճշգրտվել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի իմաստով պետական գրանցման ժամանակ թույլ տրված սխալների ուղղում կատարելու հետևանքով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանող օրենքի և Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող 2-րդ հավելվածի գնահատման կարգերով հաշվարկվող բանաձևերում շինության կամ հողամասի մակերեսի կամ գործակիցների մեծությունների փոփոխման արդյունքում: Անշարժ գույքի հարկման ճշգրտված բազան հիմք է ընդունվում 2021 թվականի հունվարի 1-ից մինչև սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հաջորդ կադաստրային գնահատման հարկային տարին ներառյալ հարկման բազան որոշելու համար:

4. Փաստաթուղթ
Ամսաթիվը և համարը

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
 22.01.2025թ. ՀՕ-21-Ն

Հրապարակումը

13.02.2025թ.

Ուժի մեջ է

03.03.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203087>

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխության և լրացումների արդյունքում հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտման համար սահմանված՝ 200 հազար դրամի և տվյալ հարկ վճարողի բոլոր հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.5 տոկոսի գումարի հանրագումարի չափով տուգանքից սահմանվել է բացառություն հետևյալ դեպքերում՝

- հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի վրա սխալ ԱՏԳ ԱԱ ծածկագիր կամ աշխատանքի կամ ծառայության սխալ կոդ տպագրելու դեպքում, երբ պահպանված են հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության համար սահմանված մյուս բոլոր կանոնները, կիրառվում է նախազգուշացում,

- վերը նշված խախտումը թեմատիկ հարկային ստուգման ակտով արձանագրելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ 50 հազար դրամի չափով: Ընդ որում, խախտումը կրկին կատարել է համարվում թեմատիկ հարկային ստուգման ակտի ամսաթվից հետո՝ մեկ տարվա ընթացքում, մինչև հաջորդ թեմատիկ հարկային ստուգման ակտի նախագծի ամսաթիվը վերը նշված խախտումը կատարելը:

5. Փաստաթուղթ

««Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

22.01.2025թ. ՀՕ-28-Ն

Հրապարակումը

17.02.2025թ.

Ուժի մեջ է

27.02.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203230>

Համառոտ նկարագիր

«Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում կատարված լրացման արդյունքում արժեթղթերի շրջանառության բնագավառի բաժնում սահմանվել է ոչ հրապարակային ֆոնդի կառավարման գործունեության իրականացման համար՝ տարեկան բազային տուրքի 500-ապատիկի չափով դրույքաչափ:

6. Փաստաթուղթ

Ամսաթիվը և համարը

Հրապարակումը

Ուժի մեջ է

Հղում

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

12.02.2025թ. ՀՕ-29-Ն

10.03.2025թ.

11.04.2025թ.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203924>

Համառոտ նկարագիր

Օրենքով սահմանվել է, որ՝

1. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում կամ ժամկետներում ֆինանսական հաշվետվությունները պետական մարմիններ չներկայացնելը կամ դրանք օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ժամկետներում չհրապարակելը, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական <http://www.azdarar.am> ինտերնետային կայքում չհրապարակելը կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դիմումի հիման վրա ֆինանսական հաշվետվությունները կամ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրիսնապատիկի չափով:

2.1-ին կետով սահմանված վարչական տույժը նշանակելու մասին որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, ֆինանսական հաշվետվությունները պետական մարմիններ չներկայացնելը կամ դրանք օրենսդրությամբ սահմանված կարգով չհրապարակելը, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական <http://www.azdarar.am> ինտերնետային կայքում չհրապարակելը կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դիմումի հիման վրա ֆինանսական հաշվետվությունները կամ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարիսնապատիկի չափով:

3.2-րդ կետով սահմանված վարչական տույժը նշանակելու մասին որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, ֆինանսական հաշվետվությունները պետական մարմիններ չներկայացնելը կամ դրանք օրենսդրությամբ սահմանված կարգով չհրապարակելը, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական <http://www.azdarar.am> ինտերնետային կայքում չհրապարակելը կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դիմումի հիման վրա ֆինանսական հաշվետվությունները կամ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհազարիսնապատիկի չափով:

Միաժամանակ, սահմանվել է, որ նշված կետերով խախտումների համար վարչական պատասխանատվությունը կիրառվում է խախտումը կատարած կազմակերպության ղեկավարի նկատմամբ:

Ինչպես նաև օրենքով սահմանվել է, որ՝

1. «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքով սահմանված՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող, խոշոր, միջին, ինչպես նաև «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքով նախատեսված՝ Կառավարության սահմանած հանրային հատվածի կազմակերպություններում օրենսդրությամբ սահմանված պահանջները չբավարարող գլխավոր հաշվապահի աշխատանքի ընդունելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. 1-ին կետով սահմանված վարչական տույժը նշանակելու մասին որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, 1-ին կետով սահմանված կազմակերպություններում օրենսդրությամբ սահմանված պահանջները չբավարարող գլխավոր հաշվապահի աշխատանքի ընդունելը կամ 1-ին կետով սահմանված խախտումը չվերացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

Միաժամանակ, սահմանվել է, որ նշված կետերով խախտումների համար վարչական պատասխանատվությունը կիրառվում է խախտումը կատարած կազմակերպության ղեկավարի նկատմամբ:

7. Փաստաթուղթ
Ամսաթիվը և համարը
Հրապարակումը
Ուժի մեջ է
Հղում

««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
06.03.2025թ. ՀՕ-52-Ն
27.03.2025թ.
01.04.2025թ.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=204807>

Համառոտ նկարագիր

«Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում կատարված փոփոխության և լրացման արդյունքում սահմանվել են պետական տուրքի հետևյալ դրույքաչափերը, մասնավորապես՝

1. Ինտերնետ շահումով խաղերի կազմակերպչի կողմից յուրաքանչյուր 100 միլիարդ դրամի չափով խաղադրույք ընդունելու իրավունք ձեռք բերելու համար՝ բազային տուրքի 175 000-ապատիկի և 19.14-րդ հոդվածի 1.1-ի մասով սահմանված համապատասխան գործակցի արտադրյալի չափով:

2. Տոտալիզատորի (ինտերնետ տոտալիզատորի) կազմակերպչի կողմից յուրաքանչյուր 50 միլիարդ դրամի չափով խաղադրույք ընդունելու իրավունք ձեռք բերելու համար՝ բազային տուրքի 50 000-ապատիկի և 19.14-րդ հոդվածի 1.1-ի մասով սահմանված համապատասխան գործակցի արտադրյալի չափով:

Միաժամանակ, սահմանվել է, որ հիմք են ընդունվելու պետական տուրքի հաշվարկման համար հետևյալ գործակիցները՝

1. 2025 թվականի ապրիլի 1-ից՝ 2.0 գործակիցը,
2. 2026 թվականի հունվարի 1-ից՝ 3.0 գործակիցը,
3. 2027 թվականի հունվարի 1-ից՝ 4.0 գործակիցը,
4. 2028 թվականի հունվարի 1-ից՝ 5.0 գործակիցը:

Վերոնշյալով սահմանված՝ պետական տուրքի հաշվարկման գործակիցները կիրառվում են, եթե տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով սահմանված կարգով խաղային գործունեության կարգավորման օպերատոր սահմանված չէ: Տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով սահմանված կարգով խաղային գործունեության կարգավորման օպերատոր սահմանված լինելու դեպքում պետական տուրքի հաշվարկման գործակից է համարվում «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով սահմանված կարգով խաղային գործունեության կարգավորման օպերատոր սահմանվելու օրն ընդգրկող տարվա համար սույն մասով սահմանված գործակիցը:

8. Փաստաթուղթ
Ամսաթիվը և համարը
Հրապարակումը
Ուժի մեջ է
Հղում

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
 05.03.2025թ. ՀՕ-55-Ն
 27.03.2025թ.
 06.04.2025թ.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=204806>

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված լրացումների արդյունքում ավելացվել է նոր կետ, համաձայն որի հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների սեփականատերերը հանցագործության հիմքով փոխադրամիջոցը սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվելու մասին քրեական վարույթ նախաձեռնելու պահից մինչև փոխադրամիջոցը դրա սեփականատիրոջ տիրապետմանը հանձնելն ազատվում են հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի գույքահարկից, եթե շարժական գույքի կադաստր վարող մարմնի կողմից Կառավարության որոշմամբ սահմանված կարգով փոխադրամիջոցի գույքահարկի հաշվառում իրականացնող համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնում տեղեկատվություն է ստացվում հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի պետական գրանցումը կասեցված լինելու մասին:

Միաժամանակ, սահմանվել է, որ վերոնշյալի հիմքով փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկումը դադարում է, իսկ հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի պետական գրանցումը կասեցվում է ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով: Նշված ժամկետը ենթակա է երկարաձգման նույն ժամկետով, եթե շարժական գույքի կադաստր վարող մարմնում

տեղեկատվություն է ստացվում քրեական վարույթի (այդ թվում՝ դատական վարույթի) հիմքով տրանսպորտային միջոցը սեփականատիրոջ տիրապետումից դուրս լինելու մասին:

9. Փաստաթուղթ

««Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

05.03.2025թ. ՀՕ-63-Ն

Հրապարակումը

28.03.2025թ.

Ուժի մեջ է

27.04.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=204848>

Համառոտ նկարագիր

«Առևտրի և ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի կատարվել է փոփոխությունների և լրացումների համաձայն՝

1. Առևտրի օբյեկտներում կաթնամթերք ապրանքախմբի (արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 04 ապրանքային խմբին դասվող) առանց կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչի կաթնամթերքը տարանջատված մեկուսամասում պետք է ապահովված լինի կանաչ, իսկ կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչով կաթնամթերքը տարանջատված մեկուսամասում պետք է ապահովված լինի նարնջագույն գունային առանձնացված սպառողական դարակաշարով (հատվածով): Կանաչ դարակաշարի տեսանելի մասում պետք է տեղադրված լինի «առանց կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչի», իսկ նարնջագույն դարակաշարում՝ «պարունակում է կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչ» անվանումով տեղեկատվական պիտակ՝ առնվազն 10X10 մմ չափսի շրջանաձև գունային ինքնակաշուն պիտակներ փակցնելու միջոցով:

2. Առևտրի իրականացման վայրերում կաթնամթերք ապրանքախմբի (արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 04 ապրանքային խմբին դասվող) առանց կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչի կաթնամթերքը տարանջատված մեկուսամասում պետք է ապահովված լինի կանաչ, իսկ կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչով կաթնամթերքը տարանջատված մեկուսամասում պետք է ապահովված լինի նարնջագույն գունային առանձնացված սպառողական դարակաշարով (հատվածով): Կանաչ դարակաշարի տեսանելի մասում պետք է տեղադրված լինի «առանց կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչի», իսկ նարնջագույն դարակաշարում՝ «պարունակում է կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչ» անվանումով տեղեկատվական պիտակ:

Միաժամանակ, սահմանվել է, որ տեղական արտադրության կամ ներմուծված կենդանուց սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի նույնականացումն ապահովելու նպատակով սպանդանոցային ծագումը հիմնավորող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փաստաթղթերը փակցվում են սպառողներին տեսանելի տեղում:

10. Փաստաթուղթ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

05.03.2025թ. ՀՕ-64-Ն

Հրապարակումը

28.03.2025թ.

Ուժի մեջ է

27.04.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=204851>

Համառոտ նկարագիր

Օրենքով սահմանվել է, որ առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում կաթնամթերք ապրանքախմբի (արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 04 ապրանքային խմբին դասվող) առանց կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչի կաթնամթերքը տարանջատված մեկուսամասում կանաչ գունային առանձնացված սպառողական դարակաշարով (հատվածով), իսկ կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչով կաթնամթերքը տարանջատված մեկուսամասում նարնջագույն գունային առանձնացված սպառողական դարակաշարով (հատվածով) ապահովված չլինելը կամ կանաչ դարակաշարում «առանց կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչի», իսկ նարնջագույն դարակաշարում «պարունակում է կաթնային յուղի (կաթնային ճարպի) փոխարինիչ» անվանումով տեղեկատվական պիտակը դարակաշարի տեսանելի մասում տեղադրված չլինելը կամ սխալ պիտակ փակցված լինելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Վերոնշյալ խախտումը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Միաժամանակ, սահմանվել է, որ տեղական արտադրության կամ ներմուծված կենդանուց սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի նույնականացումն ապահովելու նպատակով սպանդանոցային ծագումը հիմնավորող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փաստաթղթերը սպառողներին տեսանելի տեղում չփակցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով: Նույն արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

11. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

26.03.2025թ. ՀՕ-72-Ն

Հրապարակումը

07.04.2025թ.

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման մասով առանձնահատկություն է սահմանվել փաստաբանական գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների (կամավոր անհատույց իրավաբանական օգնության) մասով հարկման բազայի որոշման հետ կապված: Մասնավորապես, սահմանվել է, որ փաստաբանական գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների (կամավոր անհատույց իրավաբանական օգնության) մասով օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները չեն կիրառվում, եթե այդ ծառայությունների մասով սահմանված կարգով որոշված ԱԱՀ-ով հարկման բազան տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում չի գերազանցում ԱԱՀ վճարողների՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող բոլոր գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազայի 5 տոկոսը:

Միաժամանակ, սահմանվել է, որ՝

- 2025 թվականի հունվարի 1-ից շրջանառության հարկի գումարից նվազեցվող ծախսեր են համարվում նաև վարչական ծախսերը,
- 2025 թվականի հուլիսի 1-ից շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել ՀՀ-ում կիրառվող տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի «Մ (ԷՄ) Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» բաժնում ներառվող «69. Իրավաբանական և հաշվապահական գործունեություն», «70. Գլխամասային գրասենյակների գործունեություն. կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ» և «Ն (ԷՆ) Վարչարարական և օժանդակ գործունեություն» բաժնում ներառվող «78.2. Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն», «78.3. Աշխատուժով ապահովման այլ գործունեություն» գործունեություններ իրականացնողները,
- 2025 թվականի հուլիսի 1-ից միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել ՀՀ-ում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի «Մ (ԷՄ) Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» բաժնում ներառվող «70. Գլխամասային գրասենյակների գործունեություն. կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ» և «Ն (ԷՆ) Վարչարարական և օժանդակ գործունեություն» բաժնում ներառվող «78.2. Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն», «78.3. Աշխատուժով ապահովման այլ գործունեություն» գործունեություններ իրականացնողները և միջմարզային, ներմարզային երթուղու շահագործման կամ ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) միջմարզային, ներմարզային երթուղով ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեություն իրականացնողները:

12. Փաստաթուղթ

««Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

27.03.2025թ. ՀՕ-73-Ն

Հրապարակումը
Ուժի մեջ է
Հղում

17.04.2025թ.
18.04.2025թ.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=205729>

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում սահմանվել է հետևյալը.

1. հիմք ընդունելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից վարվող տեղեկատվական շտեմարանի, «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկատվական բազայի և էլեկտրոնային առողջապահության համակարգի տվյալները՝ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման (պետական բյուջեից վճարման ենթակա գումարի մասով) գործընթացն իրականացնել Ծառայության միջոցով, իսկ գործատուի միջոցներից վճարման ենթակա գումարը վճարի գործատուն՝ հիմք ընդունելով Հարկային մարմնի միջոցով ստացված՝ Ծառայության նպաստի հաշվարկը,

2. ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկել օրացուցային օրերով՝ առաջին 7 օրվա (գործող՝ 5 օրվա փոխարեն) համար՝ գործատուի միջոցներից, իսկ մնացած ժամանակահատվածը՝ պետական բյուջեի միջոցներից,

3. սահմանվել է նպաստ նշանակելու նոր ընթացակարգ, համաձայն որի՝ ընդհանուր դեպքում անձը որևէ դիմում չի ներկայացնում: Նպաստ նշանակելու գործընթացը սկսվում է էլեկտրոնային առողջապահության համակարգից ստացված տեղեկատվության հիման վրա՝ Հարկային մարմնի կողմից տրամադրվող տեղեկատվության համաձայն: Ծառայությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով հաշվարկելու է նպաստի չափը,

4. նպաստը վերահաշվարկելու համար սահմանվել է 36 ամսյա ժամկետ, որի ընթացքում, եթե գործատուն կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձը ներկայացնում է ճշտված հաշվարկ, ապա հարկային մարմնից ստացված տեղեկատվության (տվյալի) հիման վրա լիազոր մարմինը վերահաշվարկում է նպաստի չափը՝ նպաստը հաշվարկելու համար օրենքով սահմանված կարգով, և ըստ անհրաժեշտության (եթե փոխվել է գործատուի տրամադրած տեղեկատվությունը (տվյալը))՝ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկատվությունը հարկային մարմնի միջոցով տրամադրում է գործատուին:

13. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1258-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

09.01.2025թ. N 22-Ն

Հրապարակումը

09.01.2025թ.

Ուժի մեջ է

19.01.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=201884>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Հարկային հսկողությանն առնչվող փաստաթղթեր, իրեր կամ փորձանմուշներ վերցնելու կարգը սահմանելու մասին» N 1258-Ն որոշման դրույթները համապատասխանեցվել են ՀՀ հարկային օրենսգրքի 353-րդ հոդվածի գործող կարգավորումներին:

14. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

16.01.2025թ. N 49-Ն

Հրապարակումը

16.01.2025թ.

Ուժի մեջ է

17.01.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=202276>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1675-Ն որոշման մեջ, որի արդյունքում պետական կառավարման մարմինների և «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ մասնակիցների ղեկավարող վարողի կողմից տեղեկատվական բազան ձևավորելու և վարելու համար անհրաժեշտ տվյալները հարկային մարմին տրամադրելու, ինչպես նաև պետական կառավարման մարմիններից և այլ կազմակերպություններից ստացված տեղեկատվության հիման վրա տեղեկատվական բազա ներառված տվյալներում փոփոխություններ կատարելու կարգում ավելացվել է նոր կետեր, համաձայն որի՝

1. Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը հարկային մարմինն է տրամադրում քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում գրանցված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց՝

1) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը.

2) զբաղեցրած պաշտոնի անվանումը ու նույնականացման ծածկագիրը:

2. Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակից ստացված տվյալներն ինքնաշխատ եղանակով փոխանցվում են տեղեկատվական բազա:

15. Փաստաթուղթ

«Արտահանման խթանման նպատակով օժանդակության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

23.01.2025թ. N 98-Ն

Հրապարակումը

30.01.2025թ.

Ուժի մեջ է

01.02.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=202641>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է արտահանման խթանման նպատակով օժանդակության տրամադրման ծրագիրը:

Միաժամանակ, սահմանվել է, որ ծրագրով նախատեսված օժանդակությունը տրամադրվելու է 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կատարված արտահանումների համար:

16. Փաստաթուղթ

«Հարկային մարմին՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված հարկային հսկողության շրջանակում օգտագործելու նպատակով էներգետիկայի բնագավառում և ջրային ոլորտում լիցենզիա ստացած անձանց, ինչպես նաև ջրային ոլորտում գործունեություն իրականացնող այլ հարկ վճարողների կողմից տրամադրվող տեղեկատվության ցանկը և տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

30.01.2025թ. N 104-Ն

Հրապարակումը

31.01.2025թ.

Ուժի մեջ է

-

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=202665>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է հարկային մարմին՝

1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված հարկային հսկողության շրջանակում օգտագործելու նպատակով էներգետիկայի բնագավառում և ջրային ոլորտում լիցենզիա ստացած անձանց, ինչպես նաև ջրային ոլորտում գործունեություն իրականացնող այլ հարկ վճարողների կողմից տրամադրվող տեղեկատվության տրամադրման կարգը,

2. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված հարկային հսկողության շրջանակում օգտագործելու նպատակով էներգետիկայի բնագավառում և ջրային ոլորտում լիցենզիա ստացած անձանց, ինչպես նաև ջրային ոլորտում գործունեություն իրականացնող այլ հարկ վճարողների կողմից տրամադրվող տեղեկատվության ցանկը:

17. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետությունում նույնականացման միջոցներով դրոշմավորման ենթակա մի շարք ապրանքների ցանկը, դրոշմավորման ներդրման ժամկետները և ցանկում ներառված ապրանքների՝ նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

06.02.2025թ. N 125-Ն

Հրապարակումը

07.02.2025թ.

Ուժի մեջ է

08.02.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=202926>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել են Հայաստանի Հանրապետությունում նույնականացման միջոցներով դրոշմավորման ենթակա մի շարք ապրանքների ցանկը և դրոշմավորման ներդրման ժամկետները, ինչպես նաև այդ ապրանքների՝ նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոնները: Նախատեսվել է նույնականացման միջոցներով դրոշմավորումը ներդնել փուլային եղանակով:

Միաժամանակ, սահմանվել է, որ՝

1. մինչև որևէ ապրանքի պարտադիր դրոշմավորման ներդրման ժամկետին նախորդող օրը ներառյալ ներկայացված՝ դրոշմապիտակների տրամադրման հայտերի հիման վրա ստացված դրոշմապիտակներով դրոշմավորված լինելու դեպքում այդ ապրանքները կարող են չդրոշմավորվել նույնականացման միջոցներով,

2. որևէ ապրանքի պարտադիր դրոշմավորման ներդրման ժամկետից սկսած ներկայացված հայտերի հիման վրա ստացված դրոշմապիտակները չեն կարող վերագրվել այդ ապրանքների վրա,

3. անկախ որոշմամբ հաստատված ժամկետներից՝ տնտեսվարողներն իրենց ցանկությամբ կարող են մինչև նույնականացման միջոցներով պարտադիր դրոշմավորման ներդրման ժամկետը ապրանքների դրոշմավորումն իրականացնել նույնականացման միջոցներով,

4. այն դեպքում, երբ մինչև նույնականացման միջոցներով պարտադիր դրոշմավորման ներդրման ժամկետը տնտեսվարողն իր ցանկությամբ ապրանքների դրոշմավորումն իրականացրել է նույնականացման միջոցներով, ապա այդ դեպքում ապրանքների դրոշմավորումը դրոշմապիտակներով այլևս չի կարող իրականացվել:

18. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1271-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի N 1468-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

13.02.2025թ. N 132-Ն

Հրապարակումը

13.02.2025թ.

Ուժի մեջ է

14.02.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203101>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացող պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը սահմանելու մասին» N 1271-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի «Ավելացված արժեքի հարկի փոխհատուցվող կամ բյուջեից հաշվանցման ենթակա գումարները միասնական հաշիվ մուտքագրման պարզեցված ընթացակարգի կիրառման չափանիշները, ընթացակարգը և ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 30-ի N 333-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1468-Ն որոշումները, ինչը պայմանավորված է 2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2023թ. մարտի 1-ի ՀՕ-101-Ն օրենքով, որով սահմանվել են հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման նոր կարգավորումներ, որի շրջանակներում 2025թ. հունվարի 1-ից կիրառվում են հարկային մարմնում հարկ վճարողների անձնական հաշվի քարտերի վարման նոր կարգեր:

19. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետությունից արտահանման և Հայաստանի Հանրապետություն ներմուծման համար արգելված սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

13.02.2025թ. N 139-Ն

Հրապարակումը

13.02.2025թ.

Ուժի մեջ է

16.02.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203100>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկը, որոնց արտահանումը Հայաստանի Հանրապետությունից և ներմուծումը Հայաստանի Հանրապետություն արգելվում է վեց ամիս ժամկետով:

Միաժամանակ, սահմանվել է, որ նշված արգելքը չի տարածվում սնդիկի հավելիչով այն արտադրանքի (ապրանքների) վրա, որոնց մաքսային ընթացակարգով ձևակերպման ժամանակ առկա է ներմուծողի կամ արտահանողի կողմից կազմված և հաստատված գրավոր հայտարարագիրը՝ քաղաքացիական պաշտպանության, ռազմական, հետազոտությունների (այդ թվում՝ բժշկական), սարքերի չափաբերման և որպես չափանմուշ (էտալոն) օգտագործման նպատակով արտադրանքի անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների վրա:

Որոշման կարգավորման շրջանակներում, որոշմամբ հաստատված սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկի 3-րդ կետում նշված արտադրանքը համարվում է սնդիկային, եթե այն հայտարարատուի կողմից մաքսային հայտարարագրի համապատասխան դաշտում հայտարարագրվել է որպես սնդիկ պարունակող արտադրանք կամ այդ արտադրանքի մաքսային հսկողության արդյունքում (այդ թվում՝ տեղեկատվական բաց աղբյուրների օգտագործմամբ) պարզվել է, որ այն հանդիսանում է հեղուկ սնդիկով աշխատող չափման միջոց (սարք) կամ այդ արտադրանքում առկա են հեղուկ սնդիկով լցված մասեր կամ դրանց մակնշվածքում, փաթեթավորման վրա կամ արտադրանքն ուղեկցող փաստաթղթերում առկա են տվյալներ՝ արտադրանքում սնդիկի պարունակության վերաբերյալ:

20. Փաստաթուղթ

«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության ենթակա գործունեության տեսակների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

13.02.2025թ. N 142-Ն

Հրապարակումը

13.02.2025թ.

Ուժի մեջ է

14.02.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203094>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության ենթակա գործունեության տեսակների ցանկը:

21. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման և Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման կարգերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

13.02.2025թ. N 147-Ն

Հրապարակումը

13.02.2025թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման և Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման կարգերը:

Որոշմամբ սահմանված կարգերով նախատեսված արգելքները և սահմանափակումները տարածվում են Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԱՏԳ ԱԱ 2805 40 ծածկագրին դասվող սնդիկի վրա:

Որոշմամբ սահմանված կարգավորումները չեն տարածվում Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի N 30 որոշմամբ սահմանված վտանգավոր թափոնների ցանկերում ներառված՝ ԱՏԳ ԱԱ 2805 40 ծածկագրին դասվող սնդիկի թափոնների վրա, որոնց ներմուծման և արտահանման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշմամբ սահմանված վտանգավոր թափոններին վերաբերող դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 489-Ն որոշմամբ:

22. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի N 1067-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 16-ի N 956-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

13.02.2025թ. N 157-Ն

Հրապարակումը

14.02.2025թ.

Ուժի մեջ է

15.02.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203156>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ընդլայնվել է փոխհատուցման ենթակա սոցիալական ծախսերի շրջանակը:

Մասնավորապես, սահմանվել է, որ՝

1. կրթության գծով սոցիալական ծախսեր են համարվում նաև՝

- երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի դպրոցների, արտադպրոցական կազմակերպությունների, կենտրոնների, մանկապատանեկան մարզադպրոցների և կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից երաշխավորված այլ արտադպրոցական ծրագրերի, ինչպես նաև կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից երաշխավորված ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով տրամադրվող կրթական ծառայությունների մասով կատարված ուսման վճարները, եթե դրանք կատարվել են անկանխիկ,

- միջնակարգ (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) կրթական ծրագրերի շրջանակում դասագրքերի վարձակալության նպատակով կատարված ծախսերը: Ընդ որում՝ դասագրքերի վարձակալության նպատակով կատարված ծախսերի մասով վճարում կատարված լինելու հանգամանքը հաշվի չի առնվում:

Միաժամանակ, կրթության գծով նշված ծախսերի փոխհատուցում կկատարվի նաև 2024 թվականի ընթացքում հայտարարատու ֆիզիկական անձի կողմից (միջոցներից) կատարված ծախսերի մասով:

2. առողջապահության գծով սոցիալական ծախսեր են համարվում նաև 2024 և 2025 թվականների հաշվետու տարիների ընթացքում ՀՀ-ում ատամնաբուժական ծառայությունների ձեռքբերման ծախսերը, եթե դրանք կատարվել են անկանխիկ:

23. Փաստաթուղթ
Ամսաթիվը և համարը
Հրապարակումը
Ուժի մեջ է
Հղում

«Մաքսային մարմինների տեղակայման վայրերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
20.02.2025թ. N 160-Ն
20.02.2025թ.
21.02.2025թ.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203343>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են մաքսային մարմինների տեղակայման վայրերը:

Միաժամանակ, սահմանվել է, որ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով և ակտերով սահմանված և նույն ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ժամանման վայրի մաքսային մարմին, մեկնման վայրի մաքսային մարմին կամ նշանակման մաքսային մարմիններ են հանդիսանում համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության տարածք ժամանման վայրում, այդ տարածքից մեկնման վայրում կամ այդ տարածքում նշանակման վայրում մաքսային գործառնություններ և մաքսային հսկողություն իրականացնող պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության ստորաբաժանումները:

24. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող կարտոֆիլի սերմացուի նկատմամբ սակագնային արտոնություն կիրառելու, ներմուծման բաշխման կարգը, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձեվերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը
Հրապարակումը
Ուժի մեջ է
Հղում

20.02.2025թ. N 183-Ն
20.02.2025թ.
21.02.2025թ.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203374>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ կիրառվել է սակագնային արտոնություն, 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի կիրառման պայմանով, որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2025 թվականի հունիսի 30-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության տարածք՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0701 10 000 0 ծածկագրին դասվող 3,5 հազար տոննա «E» դասի (Էլիտային) և «A» դասի (առաջին վերարտադրության) կարտոֆիլի սերմացուի նկատմամբ::

Միաժամանակ, սահմանվել է, որ՝

1. որոշմամբ նախատեսված սակագնային արտոնության կիրառումը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպվող սույն որոշման 1-ին կետում նշված ապրանքների վրա, որոնց վերաբերյալ ապրանքների հայտարարագիրը (այդ թվում՝ նախնական մաքսային հայտարարագիրը), իսկ մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման դեպքում՝ մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման վերաբերյալ դիմումը մաքսային մարմինների կողմից գրանցվել է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2025 թվականի հունիսի 30-ը ներառյալ, բացառությամբ՝ ԱՊՀ անդամ պետություններից ծագող և արտոնյալ ծագման հավաստագրով ներմուծվող ապրանքների,

2. Հայաստանի Հանրապետության տարածք սակագնային արտոնությամբ ներմուծվող կարտոֆիլի սերմացուի ներմուծումը թույլատրվում է սահմանված ծավալից ոչ ավելի քանակով՝ լիցենզիայի առկայության դեպքում,

3. կարտոֆիլի սերմացուի ներմուծման լիցենզիա տրամադրելու մասով լիազոր մարմին է ճանաչվում Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը:

Որոշմամբ հաստատվել է՝

1. արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև կարտոֆիլի սերմացուի՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման կարգը,

2. կարտոֆիլի սերմացուի ներմուծման մեկանգամյա լիցենզիայի ձևը,

3. կարտոֆիլի սերմացուի ներմուծման գլխավոր լիցենզիայի ձևը:

25. Փաստաթուղթ

«Առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարող տնտեսավարող սուբյեկտների աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

27.02.2025թ. N 222-Ն

Հրապարակումը	27.02.2025թ.
Ուժի մեջ է	28.02.2025թ.
Հղում	https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203625

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարող տնտեսավարող սուբյեկտների աջակցության ծրագիրը:

26. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 21-ի N 1815-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	20.03.2025թ. N 327-Ն
Հրապարակումը	20.03.2025թ.
Ուժի մեջ է	21.03.2025թ.
Հղում	https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=204492

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 21-ի «ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0103 92 ծածկագրին դասվող ընտանի տեսակների կենդանի խոզերի՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ժամանակավոր քանակական սահմանափակում կիրառելու և ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» N 1815-Ն որոշման մեջ, որի արդյունքում սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքի ներկրման նպատակով՝ դիմումատուին Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում դիմում, որի հիման վրա էկոնոմիկայի նախարարությունը բաշխում է դիմումատուների միջև քվոտայով նախատեսված ապրանքի մնացած մասը և պահանջվող տեղեկատվությունը փոխանցում է Պետական եկամուտների կոմիտե:

27. Փաստաթուղթ	«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	27.03.2025թ. N 353-Ն
Հրապարակումը	27.03.2025թ.
Ուժի մեջ է	28.03.2025թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկը:

28. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի դեկտեմբերի 18-ի N 423-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

14.01.2025թ. N 34-Ն

Հրապարակումը

21.01.2025թ.

Ուժի մեջ է

22.01.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=202355>

Համառոտ նկարագիր

Հրամանով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի դեկտեմբերի 18-ի «Հարկային և մաքսային մարմիններ ներկայացվող՝ ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգումը վաղաժամ դադարեցնելու վերաբերյալ հայտարարության ձևերը հաստատելու մասին» N 423-Ն հրամանը, որով հաստատված էին ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող ապրանքների մասով հարկային և մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգումը վաղաժամ դադարեցնելու վերաբերյալ հայտարարության ձևերը:

29. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 300-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

20.01.2025թ. N 60-Ն

Հրապարակումը

23.01.2025թ.

Ուժի մեջ է

24.01.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=202417>

Համառոտ նկարագիր

Հրամանով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի «Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական (պարզեցված) հաշվարկների, եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկի (հայտարարագրի), տեղեկությունների և տեղեկանքի ձևերը և դրանց լրացման կարգերը հաստատելու մասին» N 300-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ են կատարվել, որի արդյունքում սահմանվել է որ՝

1. նպաստների, կենսաթոշակների, ապահովագրական հատուցումների, բանկերից կամ վարկային կազմակերպություններից՝ ապահովագրական հատուցումների հաշվին ստացված գումարների, պետական բյուջեից ստացվող կուտակային հատկացումների լրացուցիչ միջոցների, կուտակային հատկացումների հաշվին ստացվող եկամուտների, սոցիալական օժանդակությունների, վնասի փոխհատուցման, վարկերի, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամից հատուցվող գումարների, ինքնավար էներգաարտադրողի ստացվող փոխհատուցումների, Հատուցման հիմնադրամից ստացվող հատուցումների եկամուտների վերաբերյալ հարկային մարմնի տեղեկատվական բազայում տվյալների առկայության դեպքում, այդ եկամուտները լրացվում են ինքնաշխատ: Իսկ տվյալների բացակայության կամ դրանց փոփոխման անհրաժեշտության դեպքում ֆիզիկական անձը համապատասխան տողերում լրացնում է այդ եկամուտները,

2. հաշվարկի (հայտարարագրի) 2-րդ բաժնում՝

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմաների (չափերի) սահմաններում աշխատանքային և կամավոր աշխատանքի մասին պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման հետ կապված աշխատողների (կամավորների) ստացված փոխհատուցման վճարները (այդ թվում՝ աշխատողների գործուղման ծախսերի փոխհատուցման վճարները, դիվանագիտական ծառայողների փոխհատուցման վճարները), բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների, լրացվում են միայն այն դեպքում, եթե հաշվետու տարվա ընթացքում ստացված փոխհատուցման վճարների հանրագումարը կազմում է 3 միլիոն դրամ և ավելի,

- Ժառանգությամբ կամ նվիրատվությամբ ստացվող գույքը, դրամական միջոցները ենթակա են պարտադիր լրացման, եթե ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից միանվագ կարգով ստացվող գույքը և (կամ) դրամական միջոցները կազմում են 300 հազար դրամ և ավելի,

- գույքի օտարումից եկամուտները ենթակա են լրացման, եթե գույքի օտարումից հաշվետու տարվա ընթացքում միանվագ ստացվել է 300 հազար դրամ և ավելի,

- փոխառությունների գումարները ենթակա են լրացման, եթե հաշվետու տարվա ընթացքում միանվագ ստացվել է 300 հազար դրամ և ավելի:

30. Փաստաթուղթ

«Օտարերկրյա պետությունների (տարածքների) ռեզիդենտներ հանդիսացող հաշվետերերի և վերահսկող անձանց չբացահայտման մասին ֆինանսական հաստատության կողմից հարկային մարմնին ներկայացվող տեղեկության ձևը սահմանելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

04.02.2025թ. N 122-Ն

Հրապարակումը

05.02.2025թ.

Ուժի մեջ է

15.02.2025թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվել է օտարերկրյա պետությունների (տարածքների) ռեզիդենտներ հանդիսացող հաշվետերերի և վերահսկող անձանց չբացահայտման մասին ֆինանսական հաստատության կողմից հարկային մարմինն ներկայացվող տեղեկության ձևը:

31. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2024 թվականի հունիսի 25-ի N 794-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

31.03.2025թ. N 384-Ն

Հրապարակումը

31.03.2025թ.

Ուժի մեջ է

01.04.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=204983>

Համառոտ նկարագիր

Հրամանով լրացումներ են կատարվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2024 թվականի հունիսի 25-ի ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակներ իրականացնելու վերաբերյալ հայտարարության ձևերը և դրանց լրացման կարգերը, արտոնագրի ձևը սահմանելու մասին» N 794-Ն հրամանում, որի արդյունքում սահմանվել է, որ թեթև մարդատար ավտոմոբիլներով Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման դեպքում կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը ներկայացնելու են հրամանով սահմանված ձևով հայտարարությունը:

32. Փաստաթուղթ

«Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող՝ Իրանի Իսլամական Հանրապետության ծագման ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի կիրառման և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

14.01.2025թ. N 1

Հրապարակումը

17.01.2025թ.

Ուժի մեջ է

15.05.2025թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի համաձայնագրին համապատասխան Իրանի Իսլամական Հանրապետության ծագում ունեցող և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների նկատմամբ կիրառվում է ներմուծման մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ՝ մաքսային արժեքից, բացառությամբ նույն որոշման 1-ին կետով սահմանված ապրանքների: Միաժամանակ, նույն որոշման 1-ին կետով սահմանվել են Իրանի Իսլամական Հանրապետության ծագում ունեցող և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող առանձին ապրանքների ցանկը և դրանց համապատասխան ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը:

33. Փաստաթուղթ

«Մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողնման մասին դիմումի լրացման կարգի 36-րդ կետում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

14.01.2025թ. N 2

Հրապարակումը

17.01.2025թ.

Ուժի մեջ է

01.04.2025թ.

Հղում<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացումներ են կատարվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 13.12.2017թ. N171 որոշմամբ սահմանված՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողնման մասին դիմումի լրացման կարգի 36-րդ կետում, որի համաձայն՝ ենթակցիզային ապրանքների դեպքում նշված դիմումի 18-րդ սյունակում՝ «Տեղեկություններ ապրանքների մասին», համապատասխան տեղեկություններ են լրացվում ակցիզային և (կամ) հատուկ դրոշմապիտակների մասին:

34. Փաստաթուղթ

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի N 30 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

21.01.2025թ. N 9

Հրապարակումը

24.01.2025թ.

Ուժի մեջ է

24.01.2025թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացումներ են կատարվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի «Ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» N30 որոշման համապատասխան հավելվածներում, որոնց համաձայն՝ արգելվում է ֆիզիկական անձանց կողմից որոշակի կատեգորիաների ապրանքների ներմուծումը Միության մաքսային տարածք՝ որպես էլեկտրոնային առևտրի ապրանքներ: Այդպիսի ապրանքներից են, օրինակ՝ մարդու օրգաններն ու հյուսվածքները, վտանգավոր թափոնները, թմրանյութերը, հոգեմետ նյութերը, պրեկուրսորները, բույսերի պաշտպանության միջոցները (պեստիցիդները), որոշման 2.9-րդ կետում ընդգրկված թանկարժեք մետաղները, ռադիոէլեկտրոնային միջոցները, բարձր հաճախականության սարքերը և այլ ապրանքներ:

35. Փաստաթուղթ

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի հոկտեմբերի 16-ի N158 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

27.01.2025թ. N 10

Հրապարակումը

28.01.2025թ.

Ուժի մեջ է

27.02.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի հոկտեմբերի 16-ի «Ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառմամբ փոխադրողի կողմից որպես էքսպրես բեռ փոխադրվող անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրման մասին» որոշման մեջ: Կատարվել են տեխնիկական բնույթի փոփոխություն և ստեղծվել է ժամանակավոր պահպանության հանձնման փաստաթղթի վերաբերյալ տվյալների լրացման հնարավորություն:

36. Փաստաթուղթ

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի N 30 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

18.02.2025թ. N 17

Հրապարակումը

20.02.2025թ.

Ուժի մեջ է

22.03.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի «Ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» N 30 որոշման մեջ՝ կապված վայրի կենդանիների արտահանման և ներմուծման ընթացակարգերի հետ:

37. Փաստաթուղթ

«Առանձին տեսակների բրդի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում և Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում, ինչպես նաև այն զգայուն ապրանքների ցանկում փոփոխություններ կատարելու մասին, որոնց նկատմամբ ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի փոփոխությունը կիրառվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշմամբ» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

11.03.2025թ. N 26

Հրապարակումը

13.03.2025թ.

Ուժի մեջ է

12.04.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 14.09.2021թ. N 80 որոշման մեջ, որի համաձայն՝ ԱՏԳ ԱԱ 5101 11 000, 5101 21 000, 5101 30 000 ծածկագրերին դասվող ապրանքները մանրամասնեցվել են ըստ բրդի հաստության աստիճանի: Նշված փոփոխությամբ պայմանավորված՝ փոփոխություններ են կատարվել նաև Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 08.05.2015թ. N 16 որոշմամբ հաստատված՝ զգայուն ապրանքների ցանկում, որոնց նկատմամբ ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի փոփոխությունը կիրառվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշմամբ:

38. Փաստաթուղթ

«Իրանի Իսլամական Հանրապետության ծագում ունեցող և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածք ներմուծվող առանձին տեսակների ապրանքների նկատմամբ 2025 թվականի համար սակագնային քվոտաների ծավալների սահմանման մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

11.03.2025թ. N 27

Հրապարակումը 13.03.2025թ.
Ուժի մեջ է 15.05.2025թ.
Հղում <https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են Իրանի Իսլամական Հանրապետության ծագում ունեցող և ԵՏՄ անդամ պետություններ ներմուծվող առանձին տեսակների ապրանքների նկատմամբ 2025 թվականի համար սակագնային քվոտաների ծավալները: Միաժամանակ, նույն որոշման համաձայն՝ սակագնային քվոտայի շրջանակներում ապրանքների ներմուծումը ԵՏՄ անդամ պետությունների տարածք «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով իրականացվում է մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափի կիրառմամբ՝ որոշմամբ սահմանված պայմանների պահպանման դեպքում:

39. Փաստաթուղթ «Գորգերի արտադրության համար լատեքսի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի սահմանման մասին»
Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը 24.03.2025թ. N 27
Հրապարակումը 27.03.2025թ.
Ուժի մեջ է 26.04.2025թ.
Հղում <https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ԱՏԳ ԱԱ 4002 11 000 1 ծածկագրին դասվող ապրանքների նկատմամբ՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը:

40. Փաստաթուղթ «Սերմացու կարտոֆիլի նկատմամբ Մաքսային միության հանձնաժողովի մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում

Ամսաթիվը և համարը 22.01.2025թ. N 2
Հրապարակումը 30.01.2025թ.
Ուժի մեջ է 09.02.2025թ.

Համառոտ նկարագիր

Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 29-ի «Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» N 130 որոշումը լրացվել է 7.1.77-րդ կետով, որի համաձայն՝ 2025 թվականի հունվարի 22-ից մինչև 2025 թվականի հունիսի 30-ը ներառյալ 3.5 հազ. տոննա քանակով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ԱՏԳ ԱԱ 0701 10 000 0 ծածկագրին դասվող սերմացու կարտոֆիլի նկատմամբ սահմանվել է սակագնային արտոնություն՝ ներմուծման մաքսատուրքից ազատման ձևով:

41. Փաստաթուղթ

«Օդափոխության համար առանձին տեսակի սարքերի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում և Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի բարձրագույն խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում

Ամսաթիվը և համարը

22.01.2025թ. N 20

Հրապարակումը

20.03.2025թ.

Ուժի մեջ է

30.03.2025թ.

Հղում<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 14.09.2021թ. N 80 որոշման մեջ: Մասնավորապես, Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկից հանվել է ԱՏԳ ԱԱ 8415 20 000 9 ծածկագիրը և լրացվել ԱՏԳ ԱԱ 8415 20 000 2 և 8415 20 000 8 ծածկագրերով: ԱՏԳ ԱԱ 8415 20 000 2 ծածկագրին դասվող ապրանքների համար սահմանվել է մաքսատուրքի 8 տոկոս դրույքաչափ՝ 2025 թվականի փետրվարի 21-ից մինչև 2027 թվականի փետրվարի 28-ը, իսկ ԱՏԳ ԱԱ 8415 20 000 8 ծածկագրին դասվող ապրանքների համար ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը սահմանվել է 0 տոկոս: Միաժամանակ նշված փոփոխություններով պայմանավորված՝ փոփոխություն է կատարվել նաև Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 08.05.2015թ. N 16 որոշմամբ հաստատված՝ զգայուն ապրանքների ցանկում, որոնց նկատմամբ ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի փոփոխությունը կիրառվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշմամբ:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

1. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող հարկային եկամուտներ և պետական տուրք				
Հ/Հ	Ցուցանիշ	Հաշվետու եռամսյակ		
		Գումար (հազ. դրամ)		Աճի տեմպ ¹ %
1.1	ՀՀ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք	566,498,100.0		113.2%
2. Արտաքին տնտեսական գործունեություն				
Հ/Հ	Ցուցանիշ	Հաշվետու եռամսյակ		
		Քանակ	Ապրանքաշրջանառություն (հազ. դրամ)	Աճի տեմպ ¹ %
2.1	Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողներ այդ թվում՝	10,442	1,727,614.3	44.1%
2.1.1	արտահանում	1,504	664,374.2	37.2%
2.1.2	ներմուծում	9,908	1,063,240.2	49.9%
3. Ստուգման և ուսումնասիրության արդյունքներ ²				
Հ/Հ	Ցուցանիշ	Հաշվետու եռամսյակ		
		Ստուգումների քանակ	Առաջադրված գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ ¹ %
3.1	Համալիր հարկային ստուգում (այդ թվում՝ վերստուգում)	169	12,231,575.5	121.7%
3.1.1	այդ թվում՝ ճշգրիտ հարկային հաշվարկներով առաջացած գումար	X	8,193,028.2	155.8%
3.2	Լուծարային ստուգում	84	5,715.9	16.1%

¹ Աճի տեմպը հաշվարկվում է որպես հաշվետու ժամանակաշրջանի (եռամսյակային) ցուցանիշի հարաբերություն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշի նկատմամբ: Այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշը եղել է 0, աճի տեմպ չի հաշվարկվում:

² Տեղեկանքում ընդգրկված են հաշվետու եռամսյակում կազմված բոլոր ակտերն ու արձանագրություններն՝ անկախ դրանց ուժի մեջ մտնելու կամ վիճարկման գործընթացում գտնվելու հանգամանքից:

3.2.1	այդ թվում՝ ճշտված հարկային հաշվարկներով առաջացած գումար	X	5,215.9	15.4%
3.3	Տրանսֆերային գնագոյացման ստուգում (այդ թվում՝ վերստուգում)	X	X	X
3.4	Թեմատիկ հարկային ստուգում (ԹՍ)	2012	913,470.2	85.3%
	այդ թվում՝ թեմատիկ հարկային ստուգման հարցեր	-	-	-
3.4.1	Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտություն (ՀԴՍ)	1852	645,065.0	93.0%
3.4.2	Աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և (կամ) աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու ճշտություն (ՉԱ)	323	150,250.0	124.2%
3.4.3	Պետական տուրքի հաշվարկման և գանձման ճշտություն (ՊՏ)	-	-	-
3.4.4	Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կիրառման ճշտություն (ԱԿ/Դ)	29	72,455.2	165.5%
3.4.5	«Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունման, այդ թվում՝ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորության ապահովման կամ կանխիկ դրամով գումարի ընդունման սահմանափակումների պահպանման ճշտություն (ԱնկանխիկԳ)	253	45,200.0	21.3%
3.4.6	Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների գրանցման կարգի ու կանոնների պահպանման ճշտություն (Արտարժ)	-	-	-

3.4.7	Հաշվարկային փաստաթղթերի (բացառությամբ՝ ՀԴՄ կտրոնի) դուրս գրման համար սահմանված կարգի ու կանոնների պահպանման ճշտություն (ՀՓ)	-	-	-
3.4.8	Հարկման բազայի հաշվարկման համար հիմք հանդիսացող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գների ճշտություն (ՀԲԳ)	10	0.0	-
3.4.9	Հարկ վճարողի գործունեության իրականացման հասցեում սահմանված տեղեկություններ փակցնելը (ՏՓ)	3	500.0	-
3.5	Միասնական հաշվին մուտքագրման գումարների հիմնավորվածության ուսումնասիրություն (Միաս. Ուս.)	1790	17,123.8	71.1%
3.6	Չափագրման ուսումնասիրություն (ՉՓՄ)	57	3,477,619.7	882.5%
3.7	Թեմատիկ ուսումնասիրություն (ԹՈԽ)	124	3,953,517.9	116.0%
3.7.1	<i>այդ թվում՝ ճշտված հարկային հաշվարկներով առաջացած գումար</i>	X	175,046.1	223.2%
3.8	Հանդիպակաց ուսումնասիրություն (Հանդ. Ուս.)	2	0.0	-
3.9	ՀՀ ոչ ռեզիդենտների՝ ՀՀ աղբյուրներից ստացած եկամուտներից վճարված հարկի գումարի վերադարձի կամ ՀՀ-ի միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան օտարերկրյա պետության լիազորված մարմնի հարցումներին պատասխանելու նպատակով իրականացվող ուսումնասիրություն (Ոչ ռեզ. Ուս.)	10	0.0	-

4. Հարկային և մաքսային վարչարարության դրվագներ				
Հ/Հ	Ցուցանիշ	Հաշվետու եռամսյակ		
		Քանակ	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ ¹ %
4.1	Գանձման որոշումներ, ՀՀ ՊԵԿ-ի կողմից և ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, հարկադիր կատարման ներկայացված վարչական ակտեր, սնանկության դիմումներ	X	X	X
4.1.1	Գանձման որոշումներ	30905	34,560,312.6	116.3%
4.1.1.1	Հարկադիր կատարման ներկայացված վարչական ակտեր (ստուգման ակտեր, արձանագրություններ և գանձման որոշումներ)	31328	10,396,039.4	130.2%
4.1.2	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված սնանկության դիմումներ	173	4,176,453.4	283.5%
4.1.2.1	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված սնանկության դիմումներով վճիռներ, որոնք բավարարվել են	82	3,029,909.2	115.9%
4.1.2.2	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված սնանկության դիմումներով վճիռներ, որոնք մերժվել են	16	277,734.0	755.3%
4.1.3	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված նոր հայցադիմումներ	5	34,268.3	-
4.1.3.1	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված հայցադիմումներ, որոնք բավարարվել են	0	-	-
4.1.3.2	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված հայցադիմումներ, որոնք մերժվել են	0	-	-
4.1.4	ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված նոր հայցադիմումներ	586	10,126,857.7	272.3%
4.1.4.1	ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, որոնք բավարարվել են	377	3,276,659.4	53.9%

4.1.4.2	ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, որոնք մերժվել են	155	49,899,637.9	12525.7%
4.2	ՀՀ ՊԵԿ կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում օրենքով նախատեսված պատասխանատվության կիրառում և հարկային պարտավորությունների առաջադրում	X	X	X
4.2.1	Հարուցված վարչական վարույթ	150	898,862.9	276.1%
4.2.2	Պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ վարչական ակտ	115	898,862.9	276.1%
4.2.3	Վարչական վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներ	16	-	-
4.3	ՀՀ Հարկային օրենսգրքի 428-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական վարույթներ	X	X	X
4.3.1	Հարուցված վարույթներ	95	11,324.8	29.0%
4.3.2	Կազմված վարչական ակտեր	95	11,324.8	29.0%
4.3.3	Վարչական վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներ	0	-	-
4.3.4	ՀՀ Հարկային օրենսգրքի 423-րդ հոդվածի համաձայն հաշվարկված փոխհատուցման գումար	76	9,114.6	30.6%
4.3.5	ՀՀ Հարկային օրենսգրքի 422-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տուգանքի գումար	30	1,911.3	85.1%
4.4	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումներ (բացառությամբ 4.8 կետում նշված դեպքերի)	11052	322,875.3	138.4%
4.5	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182 ¹ հոդվածով նախատեսված վարույթներ	X	X	X
4.5.1	Հարուցված վարույթներ	7	1,000.0	57.1%

4.5.2	Վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշումներ	4	1,000.0	57.1%
4.5.3	Վարչական վարույթը կարճելու վերաբերյալ որոշում	3	-	-
5. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ				
Հ/Հ	Ցուցանիշ	Հաշվետու եռամսյակ		
		Քանակ	Աճի տեմպ¹ %	
5.1	ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներ, որից՝	580	75.8%	
5.1.1	բավարարվել է	160	45.7%	
5.1.2	բավարարվել է մասնակի	36	300.0%	
5.1.3	մերժվել է	321	93.9%	
5.1.4	կասեցվել է	-	-	
5.1.5	կարճվել է	63	103.3%	
5.1.6	վերստուգում	-	-	
5.2	ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկված ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որից՝	7	70.0%	
5.2.1	կարգապահական պատասխանատվության ենթարկված ծառայողների թիվ	3	60.0%	
5.3	ՀՀ ՊԵԿ հեռախոսագանգերի կենտրոնի-բաժնի կողմից ստացված հարցադիմումներ, որից՝	70,954	118.6%	
5.3.1	կատարվել է	70,751	118.6%	
5.4	Նոր գրանցված հարկ վճարողների թիվ, որից՝	30,754	140.4%	
5.4.1	ֆիզիկական անձ	28,186	146.2%	
5.4.2	իրավաբանական անձ	2,568	97.8%	

5.5	Լուծարված կամ պետական հաշվառումից հանված հարկ վճարողների թիվ, որից՝	2,076	122.0%
5.5.1	ԱՁ	2,064	140.8%
5.5.2	իրավաբանական անձ	12	5.1%

- Ռուսաստանն ու Իրանը կարգեցնեն մաքսային ընթացակարգերը:

Մոսկվան և Թեհրանը նախատեսում են ստեղծել պարզեցված մաքսային միջանցք՝ մատակարարման անվտանգ շղթաներ ձևավորելու համար: Նման դրույթ կա երկու երկրների նախագահների ստորագրած Համապարփակ ռազմավարական գործընկերության մասին պայմանագրում:

Կողմերն իրականացնում են Մաքսային համագործակցություն, ներառյալ պարզեցված մաքսային միջանցքի ստեղծման, լիազորված տնտեսական օպերատորի համապատասխան ինստիտուտների փոխադարձ ճանաչման նախագծերի իրականացումը, ասվում է փաստաթղթում:

Ինչպես նշվում է, դա արվելու է «անվտանգ մատակարարման շղթաների ձևավորումը խթանելու նպատակով»: Համագործակցությունը ներառում է նաև «վարչական համագործակցության կազմակերպում և մաքսային տեղեկատվության փոխանակում իրենց մաքսային մարմինների միջև»:

Link: <https://tass.ru/politika/22909765>

- Վրաստանը միանում է ապրանքների առևտրի ձևակերպումների պարզեցման կոնվենցիային:

Վրաստանը միացել է «ընդհանուր տարանցման մասին» և «ապրանքների առևտրի ձևակերպումների պարզեցման մասին» կոնվենցիային՝ ապրանքների տեղափոխման ժամանակ մաքսային ձևակերպումների պարզեցման նպատակով, ինչը համապատասխանում է 2014 թվականին երկրի և Եվրամիության միջև ստորագրված համաձայնագրին:

Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին նշել է, որ ձեռնարկությունները կշահեն մաքսային պարզեցված ընթացակարգերից, ծախսերի նվազեցումից և ԵՄ-ի հետ, նրա սահմաններից դուրս առևտրի արագացումից:

Նախարարությունն այնուհետև պարզաբանել է, որ միասնական տարանցիկ հայտարարագրի և միասնական երաշխիքի օգտագործումը, որոնք էլեկտրոնային եղանակով տրամադրվում են Վրաստանի մաքսային ծառայությանը, էլ ավելի կմեծացնի երկրի տարանցիկ հնարավորությունները և կնպաստի ապրանքների և բեռնափոխադրումների անվտանգ, սահուն և արագ տեղաշարժին:

Link: <https://www.agenda.ge/en/news/2025/42632#gsc.tab=0>

- ԱՄՆ-ը մաքսատուրքեր է սահմանում ավտომեքենաների ներկրման համար: Հետևանքներ համաշխարհային մատակարարումների համար:

2025 թվականի ապրիլի 3-ից ԱՄՆ-ը 25% մաքսատուրքեր է սահմանում երկրի սահմաններից դուրս արտադրված բոլոր մեքենաների համար: Այդ միջոցները, նախագահ Դոնալդ Թրամփի հայտարարության համաձայն, ուղղված են օտարերկրյա ավտոարտադրությունների՝ ԱՄՆ տեղափոխման խթանմանը: Բացի այդ, մայիսի 3-ից սահմանափակումների տակ կհայտնվեն նաև որոշ ավտոպահեստամասեր, որոնց ցանկը կհստակեցվի ավելի ուշ:

2024 թվականին ԱՄՆ ավտომեքենաների ներմուծումը կազմել է ավելի քան 240 մլրդ դոլար, իսկ հիմնական մատակարարը Մեքսիկան էր, որի մատակարարումներն աճել են մինչև 78,5 մլրդ դոլար:

Նոր մաքսատուրքերից ամենամեծ կորուստները, ամենայն հավանականությամբ, կկրեն Ճապոնիան և Հարավային Կորեան: 2024 թվականին Ճապոնիայից ԱՄՆ ավտომեքենաների արտահանումը կազմել է 39,7 մլրդ դոլար, իսկ Հարավային Կորեայից՝ 36,6 մլրդ դոլար: Եվրոպայում առավել շոշափելի կլինեն հետևանքները Գերմանիայի համար, որն անցյալ տարի ԱՄՆ է արտահանել 24,8 մլրդ դոլար արժողությամբ ավտომեքենաներ:

Ակնկալվում է, որ մաքսատուրքերի սահմանմամբ և սահմանափակումների պատճառով ավտომեքենաների գների աճով, առաջիկա ամիսներին գնման հետաքրքրությունը կարող է նվազել: Այսպիսով, ԱՄՆ-ում ավտომեքենաների նոր մաքսատուրքերը կարող են էական ազդեցություն ունենալ գլոբալ ավտոարդյունաբերության վրա, ընդ որում մատակարար երկրները հայտարարում են հակաքայլեր ձեռնարկելու պատրաստակամության մասին, սակայն միևնույն ժամանակ ձգտում են Վաշինգտոնի հետ բանակցային գործընթացի, քանի որ նրանց համար ԱՄՆ շուկան մնում է առանցքային:

Link: <https://www.kommersant.ru/doc/7606618?from=main>

- Համաշխարհային մաքսային կազմակերպության և Առևտրի համաշխարհային կազմակերպության ղեկավարները համաձայնագիր են ստորագրել առևտրի և մաքսային հարցերի ոլորտում համագործակցության ընդլայնման մասին:

Փոխըմբռնման հուշագրի համաձայն՝ երկու կազմակերպություններն էլ համաձայնում են բացահայտել մաքսային հարցերով համագործակցության հնարավորությունները: Նրանք նաև համագործակցելու են տեխնիկական աջակցության և կարողությունների զարգացման ուղղությամբ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում, ներառյալ առևտրի դյուրացման համաձայնագրի մեխանիզմի շրջանակում տրամադրվող դրամաշնորհների օգտագործումը՝ անդամներին աջակցելու ԱՀԿ առևտրի դյուրացման համաձայնագրի իրականացման գործում:

Բացի այդ, երկու կազմակերպությունները տեղեկատվություն կփոխանակեն ընդհանուր հետաքրքրության ոլորտներում և կհամագործակցեն հատուկ խնդիրների լուծման և տվյալների վերլուծության մեջ, որոնք կապված են ներդաշնակեցված համակարգի հետազմման և սակագնային դասակարգման մշակման հետ:

Link: <https://www.wcoomd.org/en/media/newsroom/2025/january/heads-of-wco-and-wto-sign-agreement-to-boost-cooperation-on-trade-and-customs-matters.aspx>

- Համաշխարհային մաքսային կազմակերպությունը անցկացրել է ապրանքների ծագման փոխկապակցվածության գլոբալ ֆորումն առևտրի թվայնացման ուժեղացման համար:

Համաշխարհային մաքսային կազմակերպությունը անցկացրել է ապրանքների ծագման փոխկապակցման վերաբերյալ գլոբալ ֆորում. «Առևտրի ընթացակարգերի պարզեցում՝ հաշվի առնելով ապրանքների ծագման փոխկապակցվածությունը. մշակումից մինչև իրականացում» թեմայով:

Միջոցառումը նպատակ ունի խթանել ծագման հետ կապված գործընթացների թվայնացման վերաբերյալ քննարկումները՝ շեշտը դնելով մաքսային վարչությունների, փաստաթղթեր տրամադրող մարմինների, տարածաշրջանային տնտեսական համայնքների և մասնավոր հատվածի միջև համագործակցության վրա:

ՀՄԿ գլխավոր քարտուղարի տեղակալը կարևորել է ֆորումի դերը գիտելիքների փոխանակման խթանման և ապրանքների ծագման հետ կապված թվայնացման ոլորտում գործընկերային հարաբերությունների հաստատման գործում:

Մասնակիցներն ընդգծել են համագործակցության շարունակական անհրաժեշտությունը՝ ապրանքների ծագման հավաստագրման ավելի արդյունավետ գլոբալ համակարգի ստեղծման ուղղությամբ առաջ շարժվելու համար: Համաժողովի արդյունքներով ՀՄԿ-ն կմշակի

Էլեկտրոնային վերապատրաստման դասընթաց, որը կօգնի մաքսային մարմինների աշխատակիցներին ավելի լավ հասկանալ ապրանքների ծագման փոխկապակցվածությունը:

Link: <https://www.wcoomd.org/en/media/newsroom/2025/february/wco-launches-the-global-forum-on-origin-interconnectivity-to-enhance-trade-digitalization.aspx>

- ԵԱՏՄ-ն սահմանել է Էլեկտրոնային առևտրի ապրանքների ոչ սակագնային կարգավորման կանոններ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան սահմանել է ֆիզիկական անձանց կողմից ձեռք բերված Էլեկտրոնային առևտրի ապրանքների Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծման առանձնահատկությունները, որոնց նկատմամբ կիրառվում են ոչ սակագնային կարգավորման միջոցներ:

Որոշման նախագիծը պատրաստվել է անցյալ տարի միության Մաքսային օրենսգրքում փոփոխությունների ընդունման կապակցությամբ, որով հենց ներմուծվում է Էլեկտրոնային առևտրի ապրանքների կատեգորիան, պարզաբանել է ԵՏՀ առևտրի հարցերով նախարար Անդրեյ Սլեպնյովը: Փաստաթղթով նախատեսվում է, որ ֆիզիկական անձանց կողմից ձեռք բերված գրեթե բոլոր գնումների նկատմամբ կգործի այնպիսի ռեժիմ, որը չի վատթարացնի անձնական օգտագործման համար թույլատրելի ապրանքներ ներմուծող ֆիզիկական անձանց վիճակը:

Մասնավորապես, հնարավոր է մնում գաղտնագրման բաղադրիչներով սարքերի ներմուծումը (հեռախոսներ, խելացի-ժամացույցներ): Միաժամանակ արգելվում է թանկարժեք քարերի և թանկարժեք մետաղների, դեղամիջոցների, հատուկ տեխնիկական միջոցների, պեստիցիդների, օզոնաքայքայիչ, թունավոր, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի, զենքի և մի շարք այլ ապրանքների ներմուծումը:

Դեղերի մասով որոշվել է հետագայում մշակել դրանց ներմուծման հնարավորության իրացման հարցը: Կմշակվի նաև ֆիզիկական անձանց կողմից այլ կատեգորիաների ապրանքների ներմուծման հնարավորությունը՝ հաշվի առնելով ԵԱՏՄ անդամ պետությունների հետաքրքրվածությունը:

Ենթադրվում է, որ ոչ սակագնային կարգավորման մասով ընդունված որոշումն ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օր հետո: Միևնույն ժամանակ, դա տեղի կունենա Մաքսային օրենսգրքում փոփոխությունների ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, որոնք, իրենց հերթին, կսկսեն գործել ԵԱՏՄ բոլոր երկրների կողմից համապատասխան ներպետական ընթացակարգերի կատարումից հետո: Ընդ որում, Անդրեյ Սլեպնյովը հիշեցրել է, որ հաշվի առնելով Էլեկտրոնային առևտրի ապրանքների կատեգորիայի

առանձնացումը, առաջիկայում կընդունվեն նաև մի շարք այլ որոշումներ, որոնք վերաբերում են նաև մաքսասակագնային կարգավորման հարցերին:

Link: <https://eec.eaeunion.org/news/eaes-ustanovil-pravila-netarifnogo-regulirovaniya-tovarov-elektronnoy-torgovli/>

- ԵԱՏՄ-ում ընդլայնել են ապրանքների առանձին կատեգորիաների համար պարզեցված մաքսային հայտարարագրման հնարավորությունները:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) Կոլեգիան փոփոխություններ է կատարել տրանսպորտային, առևտրային և այլ փաստաթղթերի՝ որպես ապրանքների մասին հայտարարագրի օգտագործման կարգի մասին հրահանգներում: Ընդլայնվել են ապրանքների հայտարարագրման ընդհանուր ձևի փոխարեն ցուցակի տեսքով պարզեցված մաքսային փաստաթուղթ օգտագործելու դեպքերը:

Փոփոխությունները կպարզեցնեն ապրանքների առանձին կատեգորիաների մաքսային հայտարարագրումը և կկրճատվեն դրանք ստացողներին հասցնելու ժամանակը, մեկնաբանել է ԵՏՀ մաքսային համագործակցության հարցերով նախարար Ռուսլան Դավիդովը:

Link: <http://www.finmarket.ru/database/news/6367319>

- ԵԱՏՄ-ի և Իրանի միջև ազատ առևտրի մասին լիաֆորմատ համաձայնագիրն ուժի մեջ կմտնի ընթացիկ տարվա մայիսի 15-ին:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը պաշտոնական ծանուցում է ստացել Իրանի Իսլամական Հանրապետության կողմից Եվրասիական տնտեսական միության և Իրանի միջև ազատ առևտրի մասին լիաֆորմատ համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին: Ավելի վաղ՝ 2025 թվականի հունվարին, իրանական կողմի հասցեին ծանուցում էր ուղարկվել ԵԱՏՄ-ում բոլոր ընթացակարգերի ավարտի մասին:

Համաձայնագրի դրույթների համաձայն, անհրաժեշտ ընթացակարգերի ավարտը հաստատող նոտաների փոխանակումից հետո փաստաթղթի ուժի մեջ մտնելու համար նախատեսված է 60 օր ժամկետ: Այսպիսով, Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի 2025 թվականի մայիսի 15-ին, նշել է ԵՏՀ առևտրի նախարար Անդրեյ Սլեպնյովը: Նոր համաձայնագրի իրականացումը երկրների միջև առևտրի զարգացման արդյունավետ գործիք կդառնա և արդեն տեսանելի հեռանկարում կօգնի փոխադարձ ապրանքաշրջանառությունը հասցնել ռեկորդային 12 մլրդ դոլարի: Դա նշանակում է մոտավորապես կրկնակի աճ ընթացիկ ծավալների համեմատ:

2019 թվականից գործում է ԵԱՀԵՄ-ի և Իրանի միջև ժամանակավոր համաձայնագիրը, որը հանգեցնում է ազատ առևտրի գոտու ձևավորմանը՝ սահմանափակ քանակությամբ ապրանքների վերաբերյալ: 2023 թվականի դեկտեմբերի 25-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրվել է ազատ առևտրի մասին լիաֆորմատ համաձայնագիր, որը կողմերի միջև սահմանեց անմաքս ռեժիմ՝ ամբողջ ապրանքային անվանացանկի գրեթե 90%-ի նկատմամբ:

Link: [https://eec.eaeunion.org/news/andrey-slepnev-polnoformatnoe-soglashenie-o-svobodnoy-torgovle-mezhdu-eaes-i-iranom-vstupit-v-silu-](https://eec.eaeunion.org/news/andrey-slepnev-polnoformatnoe-soglashenie-o-svobodnoy-torgovle-mezhdu-eaes-i-iranom-vstupit-v-silu-1/)

[1/](#)